վենիկով վոճավորած և դեպի մեջքը դարձրած. դեմքը թեքել է դեպի նայողը*։ Ամենայն հավանականությամբ հանդիպակաց կողմը պիտի լիներ յերկրորդ առյուծը, իբրև դրան պահապաններ։ Սրա նման յերեվույթ տեսնում ենք Դիարբեքիրի Խարբերդի դրան մոտ, խորշի աջ և ձախ կողմերից, ըստ արձանագրության հիջրեթի 297 կամ փրկչական 909/10 թվին**։ Տեղի և դասավորության կողմից Դիարբեքիրին շատ նման են մեր Աղթամարի վանքի զույգ առյուծները 916 թվից, արևելյան պատի խորշի յերկու կողմից[1]։

Առյուծի հարձակումը ցուլի վերա հայ արվեստի մեջ տեսնում ենք Ծախաց քարում 1061 թվին, Մակարա վանքում վոչ ուշ քան 1207 թ., բայց հավանորեն ԺԲ. դարու յերկրորդ կիսում. ԺԳ. դարու առաջին քառորդում Գեղարդի տաճարի հարավային պատին և մոտավոր նմանությամբ Դիարբեքիրում 1163/4—1180 թ. թ.[2], հավանորեն ավելի վաղ արևելյան վոսկերչական գործերի մեջ, քիչ տարբերությամբ միայն, այսինքն առյուծը հարձակվել է յեղան վերա և փողոտում է պարանոցի կողմից, կամ յեղջերուի վերա[3], իսկ շատ ավելի հին հետիտյան արվեստի մեջ[4]։ Այս հիշատակությունների ձևակերպության մեջ ի հարկե, կան փոքրիկ տարբերություններ, բայց ընդհանուր միտքը նույն է. առյուծը հարձակվել է յեղան վերա և կամենում է փողոտել նորան։

Վերցնենք մի ուրիշ մոտիվ, վոր գործադրված ենք տեսնում հայ և մահմեդական — սելջուկյան արվեստների մեջ, թևավոր կամ անթև վիշապները, իրար հետ կռվող, իրար փաթաթված կամ իրար հանդեպ, վորոնց համար Berchem-ը նկատում է. Ce motif est figuré sur plusieurs monuments musulman du moyen âge—այս մոտիվը ձևակերպված է մեջ-



Գրական փայտակերտ. 1272 թ. Պատկեր 63—64.

նադարյան, մուսուլմանական շատ հուշարձանների վերա—և փաստական որինակներ ցույց տալիս, Բաղդատում, Համիթում, Կայիրեյում, Հալեպի միջնաբերդում կամ Երզրումի Զիֆտե մինարեի վերա, գործադրված նաև Որթոքիդների դրամների վերա*։ Թողնենք գիտնականների, դրանց թվում և Բերխեմի բացատրությունները, պատմական դեպքերի հետ կապելով, իրև զինանշանների. մեզ հետաքրքրում է այստեղ իրև գեղարվեստական յերևույթ, վոր նկատում ենք նաև Հայաստանում։ Վիշապական (և կենդանական) մոտիվների առատ նյութ է տալիս Առաքելոց հայտնի Տաճարը 1204/6 թվից, բայց նկատելի յեն նաև քանդակագործության մեջ. ահա ձեզ Կոտայքի Առինջ գյու-

* Berchem—Strzygowski, Amida. 82 շ.

* Анийская Серия № 2. Н. Марр. СП. 1908. ст. 40. №49. рис. 8.

** Strzygowski. Amida. 344. պատկ. 292. Taf. III. 1. 2.

1 Walter Bachman. Kirchen und Moscheen in Armenien uud Kurdistan. Lpzg. Taf. 34. 36: Линч. Армения. 1910 Том. II. պատկ. 141.։ Strzygowski. Die Baukunst der Armenier. 295.

2 Գեղարդինը տ. Ուվարովայի. Матер. XIII. Табл. III։ Մակարա վանքինը՝ Փափազյանի. Հնութիւնք վանորէից. Առաջին գիրք. Վաղարշ. 1899. լուսանկարների ժողովածու։ Դիարբեքիրում՝ Strzygowski Amida. 63. 67. Տախտ. XVI. 1.

3 Смирнов. Восточное Серебро. Атлас. պատկ. 289. 106։

4 Хетты. статья Захарова. 73.